

2025 թվականի չորրորդ եռամսյակում կենսաթոշակային ֆոնդերից Կայուն եկամտայինի (CQFIX) եկամտաբերությունը կազմել է 3.5%, Պահպանողականինը (CQCON)՝ 4.3%, Հավասարակշռվածինը (CQBAL)՝ 4.5%:

2025 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ կենսաթոշակային ֆոնդերը ստեղծման պահից ունեցել են 8.3-8.6% եկամտաբերություն:

Կենսաթոշակային ակտիվների ընդհանուր արժեքը եռամսյակի ավարտին հասել է 691 միլիարդ դրամի, որից 195 միլիարդ դրամը կազմել է կառավարման արդյունքում ձևավորված եկամուտը:

Ընթացիկ եռամսյակում ամենաբարձր եկամտաբերությունը գրանցել են ֆոնդերի տեղական ներդրումներից պարտատոմսերը՝ 7.2-7.7% և ավանդները՝ շուրջ 2.7% դրամով արտահայտված եռամսյակային եկամտաբերությամբ:

Նույն ժամանակահատվածում արտասահմանյան ներդրումներից ամենաբարձր եկամտաբերությունը գրանցել են բաժնային արժեթղթերը՝ 4.0-4.1% դրամով արտահայտված եռամսյակային եկամտաբերությամբ:

Եռամսյակի ընթացքում դրամի որոշակի արժևորումը դոլարի և եվրոյի նկատմամբ զրոյին մոտ բացասական ազդեցություն է ունեցել ֆոնդերի եռամսյակային եկամտաբերության վրա:

**ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ
ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

2025Ե4


Համաշխարհային և տեղական շուկաներում վերջին զարգացումներ

2025 թվականի ընթացքում ֆինանսական շուկաները գործել են բազմաթիվ հակադիր ազդակների պայմաններում: Տարվա առաջին կեսին շուկաների ուշադրության կենտրոնում առևտրային լարվածության հետ կապված մտահոգությունները էին, երբ ԱՄՆ-ը բարձրացրեց մաքսային դրույքաչափերը: Արդյունքում, զարգացած շուկաների բաժնային արժեթղթերը ապրիլի սկզբին արձանագրեցին 16.5% անկում, սակայն հետագայում կարողացան հաղթահարել այդ ազդեցությունը և տարին ավարտեցին 21.6% եկամտաբերությամբ:

2025 թվականի չորրորդ եռամսյակում համաշխարհային ֆինանսական շուկաները գործել են հարաբերականորեն բարելավված մակրոտնտեսական միջավայրում, որտեղ գնաճային ճնշումների հետագա թուլացումը և առաջատար կենտրոնական բանկերի կողմից դրամավարկային քաղաքականության զգուշավոր մեղմացումը նպաստել են շուկաների կայունացմանը: Միևնույն ժամանակ, պահպանվել են որոշակի անորոշություններ՝ կապված գլոբալ տնտեսական աճի տեմպերի, ֆիսկալ քաղաքականության կայունության և աշխարհաքաղաքական զարգացումների հետ:

Չորրորդ եռամսյակում 2025 թվականի համար տնտեսական աճի կանխատեսումը զարգացած և զարգացող երկրների համար աճել է՝ հասնելով համապատասխանաբար 1.7% և 4.2%-ի: 2025 թվականի գնաճի կանխատեսումները թե՛ զարգացած և թե՛ զարգացող երկրների համար մնացել է անփոփոխ՝ համապատասխանաբար կազմելով 3.3% և 3.0%¹:

12 ամսյա գնաճը 2025թ դեկտեմբերին




ԱՄՆ-ում ՀՆԱ-ի իրական աճը 2025 թվականի երրորդ եռամսյակում կազմել է 1.1%²: Գնաճը չորրորդ եռամսյակի ընթացքում նվազել է՝ դեկտեմբերին հասնելով 2.7%-ի: 2025 թվականի դեկտեմբերի նիստում Դաշնային պահուստային համակարգը իջեցրեց հիմնական տոկոսադրույքը 25 բազիսային կետով՝ հասցնելով այն 3.50–3.75%-ի, հիմնավորելով որոշումը աշխատաշուկայի աստիճանական սառեցմամբ և գնաճի մեղմացմամբ (թեև այն դեռևս մնում է բարձր տիրույթում), միաժամանակ ընդգծելով, որ առաջիկա

քայլերը կլինեն տվյալահեն, քանի որ դրամավարկային քաղաքականությունը արդեն մոտ է չեզոք մակարդակին:

² Ե/Ե, սեզոնային ճշգրտված չտարեկանացված ցուցանիշ

Եվրոգոտում ՀՆԱ-ի աճը 2025 թվականի երրորդ եռամսյակում արագացել է մինչև 0.3%, մինչդեռ գնաճը սեպտեմբերին կազմել է 2.0%: Եվրոպական կենտրոնական բանկը (ECB) 2025 դեկտեմբերին քաղաքականության տոկոսադրույքը թողել է անփոփոխ՝ հիմնավորելով այն թիրախին մոտ գնաճով: Միևնույն ժամանակ Եվրոպական կենտրոնական բանկն ընդգծել է, որ հետագա որոշումները կընդունվեն տվյալների հիման վրա և նիստ առ նիստ:

Քաղաքականության տոկոսադրույքը ընթացիկ եռամսյակի ավարտին



Չինաստանում ՀՆԱ-ի աճը 2025 թվականի երրորդ եռամսյակում կազմել է 1.1%, իսկ գնաճը դեկտեմբերին շարունակել է պահպանվել համեմատաբար ցածր 0.8% մակարդակում: Չինաստանի ազգային բանկը (PBoC) եռամսյակի ընթացքում քաղաքականության տոկոսադրույքը թողել է անփոփոխ:

Տնտեսական ակտիվության ցուցանիշը Հայաստանում 2025 թվականի դեկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատած աճել է 11.4%-ով, ինչի արդյունքում տարեկան արդյունքներով

գրանցվել է տնտեսական ակտիվության 9.1% աճ: Շինարարությունը և ծառայությունների ոլորտը շարունակել են պահպանել համեմատաբար բարձր աճի տեմպը, համապատասխանաբար 20.2% և 10.5%:

Գնաճը 2025 թվականի դեկտեմբերին կազմել է 3.3%՝ փոքր-ինչ գերազանցելով գնաճի թիրախային մակարդակը: ՀՀ ԿԲ-ն քաղաքականության տոկոսադրույքը եռամսյակի ընթացքում 25 բազիսային կետով իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով 6.50%, միևնույն ժամական, ըստ ՀՀ ԿԲ խորհրդի անդամների, առկա անորոշությունների և ռիսկերի պայմաններում դիտարկվել են ինչպես Ա տիպի սցենարներ՝ կապված համաշխարհային չեզոք տոկոսադրույքների հնարավոր աճի և ներքին պահանջարկի ուժեղացման հետ, այնպես էլ Բ տիպի սցենարներ՝ պայմանավորված արտաքին տնտեսական դանդաղմամբ, ներքին պահանջարկի թուլացմամբ և անշարժ գույքի գների հնարավոր աստիճանական ճշգրտմամբ³:

Տնտեսական նման զարգացումներով պայմանավորված՝ համաշխարհային բաժնային արժեթղթերը եռամսյանկը հիմնականում ամփոփել են դրական արդյունքներով:

³ Դրամավարկային քաղաքականության զեկույց (2025թ. 4-րդ եռամսյակ)

Եռամսյակի ընթացքում զարգացող շուկաների բաժնետոմսերը գրանցել են 4.8% եկամտաբերություն՝ գերազանցելով եռամսյակի ընթացքում զարգացած շուկաների բաժնետոմսերի գրանցած 3.2% եկամտաբերությունը:


ԱՄՆ բաժնետոմսերի շուկան եռամսյակի ընթացքում գրանցել է չափավոր 2.7% աճ՝ պահպանելով տարվա ընթացքում ձևավորված դինամիկան: Տեխնոլոգիական ընկերությունները շարունակել են պահպանել իրենց առաջատար դիրքը, այնուամենայնիվ, աճը աստիճանաբար տեղափոխվել է նաև այլ ոլորտներ: Եվրոպական բաժնետոմսերը եռամսյակն ամփոփել են համեմատաբար բարձր 5.2% եկամտաբերությամբ՝ պայմանավորված ցածր տոկոսադրույքների պայմաններում ֆինանսական հատվածի արդյունքներով: Ճապոնիայում բաժնետոմսերի շուկան գրանցել է երկնիշ 12.1% աճ: Մինչդեռ, Չինաստանում արձանագրվել են ավելի համեստ արդյունքներ՝ պայմանավորված ներդրողների կողմից պորտֆելների տարեվերջյան ճշգրտմամբ և անշարժ գույքի շուկայում անորոշության մեծացմամբ:

2025 թվականի տարեվերջին համաշխարհային պետական պարտատոմսերի շուկայում ձևավորվեց հստակ տարանջատում: Մեծ Բրիտանիայում պետական պարտատոմսերը գրանցեցին տպավորիչ արդյունքներ՝ բյուջեի նկատմամբ շուկաների դրական արձագանքի և Անգլիայի բանկի (BoE) դեկտեմբերյան 25 բազիսային կետով տոկոսադրույքի կրճատման արդյունքում: Այս եռամսյակում Եվրոպական պետական պարտատոմսերը գրանցեցին 3.6% աճ: Դաշնային պահուստային համակարգի (FED) տոկոսադրույքի կրճատումներից հետո ԱՄՆ պետական պարտատոմսերի եկամտաբերության կորը կարճ հատվածում գրանցեց անկում, երկարաժամկետ հատվածում աճ՝ ինչի արդյունքում ԱՄՆ պետական պարտատոմսերը եռամսյակը ամփոփեցին 0.9% աճով: Համաշխարհային ներդրումային դասի պարտատոմսերը (investment grade) եռամսյակի ընթացքում գրանցեցին 0.2% եկամտաբերություն: Մինչդեռ, ոչ ներդրումային դասի պարտատոմսերը (high yield) եռամսյակն ամփոփեցին 2.2% եկամտաբերությամբ:

Եռամսյակի ընթացքում հումքային ապրանքները գրանցել են 5.8% եկամտաբերություն՝ պայմանավորված թանկարժեք և արդյունաբերական մետաղների ունեցած շուրջ 20.7% և 11.0% եկամտաբերությամբ: Մինչդեռ, նույն ժամանակահատվածում հումքային ապրանքներից էներգակիրների գները եռամսյակի ընթացքում նվազել են համապատասխանաբար 6.2%-ով:

Կենսաթոշակային ֆոնդերի և հիմնական շուկայական ինդեքսների եկամտաբերությունների 2025 թվականի դինամիկան⁴

● Առավելագույն ● Նվազագույն ● Ներկա




⁴ AMGOV_5-10, AMGOV_10-20, AMGOV_20-ի համար աղբյուրը՝ Ընկերության կողմից ներքին օգտագործման նպատակով կառուցված ինդեքսներ: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են դրամային արտահայտությամբ: Մնացած արտասահմանյան ակտիվների աղբյուրը՝ Bloomberg: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են ակտիվների նոմինալ արժույթով (currency of denomination):

2025 թվականի չորրորդ եռամսյակի եկամտաբերության մեկնաբանություն


2025 թվականի չորրորդ եռամսյակը կենսաթոշակային ֆոնդերի տեղական և արտասահմանյան ներդրումները հիմնականում ամփոփել են դրական արդյունքներով: Ընթացիկ եռամսյակում ամենաբարձր եկամտաբերությունը գրանցել են ֆոնդերի տեղական ներդրումներից պարտատոմսերը և ավանդները, իսկ արտասահմանյան ներդրումներից՝ բաժնային արժեթղթերը: Դրամի որոշակի արժևորումը դոլարի և եվրոյի նկատմամբ եռամսյակի ընթացքում զրոյին մոտ բացասական ազդեցություն է ունեցել ֆոնդերի եկամտաբերության վրա:

Նման զարգացումներով պայմանավորված՝ 2025 թվականի չորրորդ եռամսյակը կենսաթոշակային ֆոնդերը ամփոփել են բարձր արդյունքներով: Ֆոնդերից Կայուն եկամտայինը (CQFIX) ունեցել է 3.5%, Պահպանողականը (CQCON)՝ 4.3%, Հավասարակշռվածը (CQBAL)՝ 4.5% եկամտաբերություն:


CQFIX եռամսյակային եկամտաբերություն



CQCON եռամսյակային եկամտաբերություն




CQBAL եռամսյակային եկամտաբերություն




2025 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ ֆոնդերի ակտիվների 65-78%-ը ներդրված է եղել Հայաստանում, այնպիսի ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են պետական և կորպորատիվ պարտատոմսերը, ավանդները, բաժնային արժեթղթերը և այլընտրանքային ներդրումները: Ակտիվների մնացած 22-35%-ը ներդրված է եղել արտասահմանյան բաժնային և պարտքային արժեթղթերում:


CQFIX ակտիվների կառուցվածքը



CQCON ակտիվների կառուցվածքը




CQBAL ակտիվների կառուցվածքը



- Ավանդներ և դրամական միջոցներ
- Տեղական կորպորատիվ պարտատոմսեր
- Արտասահմանյան բաժնային արժեթղթեր
- Այլընտրանքային ներդրումներ
- ՖԳ պետական պարտատոմսեր
- Արտասահմանյան պարտքային արժեթղթեր
- Տեղական բաժնային արժեթղթեր

Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների գերակշիռ մասը կազմել են ՀՀ պետական պարտատոմսերը և արտասահմանյան բաժնային ներդրումային ֆոնդերը: Իրենց մեծությամբ հաջորդը եղել են բանկային ավանդները, դրամային կորպորատիվ պարտատոմսերն ու արտասահմանյան պարտքային ներդրումային ֆոնդերը: Ներդրումների ավելի փոքր մասն են կազմել տեղական այլընտրանքային ներդրումները և տեղական բաժնետոմսերը:

**Բաժնային ակտիվների
եկամտաբերությունը ընթացիկ
եռամսյակում**




⁵2025 թվականի չորրորդ եռամսյակում գլոբալ և զարգացած երկրների բաժնետոմսերն ունեցել են համապատասխանաբար 3.4% և 3.2% աճ:

ԱՄՆ բաժնետոմսերը նույն ժամանակահատվածում գրանցել են շուրջ 2.7% եռամսյակային եկամտաբերություն:

Այս եռամսյակում Պահպանողական և Հավասարակշռված կենսաթաշակային ֆոնդերի արտասահմանյան բաժնային պորտֆելները, համաշխարհային շուկաներում վերջին զարգացումներով պայմանավորված, գրանցել են 4.4% և 4.4% եկամտաբերություն:

**Պարտքային ակտիվների
եկամտաբերությունը ընթացիկ
եռամսյակում**




⁶Գլոբալ ներդրումային դասի պարտատոմսերը չորրորդ եռամսյակում գրանցել են զրոյին մոտ դրական 0.2% եկամտաբերություն: Կենսաթաշակային ֆոնդերից Կայուն եկամտային և Պահպանողական ֆոնդերի արտասահմանյան պարտքային պորտֆելների եկամտաբերությունը ևս եռամսյակի ընթացքում եղել է զրոյին մոտ դրական՝ տատանվելով 0.0% -ից 0.3%-ի միջակայքում:

Եռամսյակի ընթացքում արտարժույթային շուկայում էական զարգացումներ չեն նկատվել և դոլարի և

Եվրոյի նկատմամբ դրամի որոշակի արժևորմամբ պայմանավորված ընդհանուր արտարժույթային ազդեցությունը ֆոնդերի եռամսյակային եկամտաբերության վրա եղել է զրոյին մոտ բացասական 0.1%-ի չափով:

⁵ Աղբյուրը՝ Bloomberg: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են ակտիվների նոմինալ արժույթով (currency of denomination):
⁶ Աղբյուրը՝ Bloomberg: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են ակտիվների նոմինալ արժույթով (currency of denomination):

**ՀՀ պետական պարտատոմսերի
եկամտաբերությունը ընթացիկ
եռամսյակում**



⁷Հայաստանի 5-10 տարի (AMGOV 5-10) մարման ժամկետ ունեցող պետական պարտատոմսերի եռամսյակային եկամտաբերությունը կազմել է 7.2%, 10-20 տարի (AMGOV 10-20) մարման ժամկետ ունեցող պետական պարտատոմսերինը՝ 8.2%, իսկ 20 տարուց ավել (AMGOV 20I) մարման ժամկետ ունեցող պետական պարտատոմսերինը՝ 9.2%:

2025 թվականի չորրորդ եռամսյակում ֆոնդերի՝ Հայաստանի պետական պարտատոմսերի պորտֆելները ունեցել են 7.2%-7.7% եկամտաբերություն:

Ֆոնդերի ավանդային պորտֆելները ընթացիկ եռամսյակում գրանցել են մինչև 2.7% եռամսյակային եկամտաբերություն:

Ֆոնդերի՝ Հայաստանի ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերի եռամսյակային եկամտաբերությունը, ֆոնդից կախված, տատանվել է 3.0% - 3.2% միջակայքում:


Ֆոնդերի Հայաստանի ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերի եռամսյակային եկամտաբերությունը եղել է բացասական՝ ֆոնդից կախված տատանվելով 0.2% - 0.9% միջակայքում:

Ֆոնդերի տեղական բաժնետոմսերի եկամտաբերությունը ընթացիկ եռամսյակում ֆոնդից կախված էական տարբերվել է. Պահպանողական ֆոնդի տեղական բաժնետոմսերը եռամսյակն ամփոփել են 1.8% անկմամբ, մինչդեռ Հավասարակշռված ֆոնդի տեղական բաժնետոմսերը՝ 4.6% աճով:

⁷ Աղբյուրը՝ Ընկերության կողմից ներքին օգտագործման նպատակով կառուցված ինդեքսներ: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են դրամային արտահայտությամբ:

Ֆոնդերի երկարաժամկետ եկամտաբերությունը


Ֆոնդերի փայի հաշվարկային արժեքը



2025 թվականի չորրորդ եռամսյակի վերջի դրությամբ կենսաթոշակային ֆոնդերից Կայուն եկամտայինը ստեղծման պահից ունեցել է 8.3%, Պահպանողականը՝ 8.4%, իսկ Հավասարակշռվածը՝ 8.6% միջին տարեկան եկամտաբերություն:

Վերջին հինգ տարիների միջին տարեկան եկամտաբերությունը Կայուն եկամտային ֆոնդի համար կազմել է 5.5%, Պահպանողականի համար՝ 6.6%, իսկ Հավասարակշռվածի համար՝ 6.8%:

Ստեղծման պահից եկամտաբերություն




Կենսաթոշակային կուտակումների գնողունակությունը ստեղծման պահից ավելացել է 123% - 131%-ով՝ ֆոնդերի՝ գնաճից բարձր եկամտաբերության շնորհիվ:⁸

2025 թվականի դեկտեմբերին կենսաթոշակային ֆոնդերը ստեղծման պահից ունեցել են 157%-164% եկամտաբերություն: Նույն ժամանակահատվածում կուտակային գնաճը կազմել է շուրջ 33%:

⁸ Գնաճով ճշգրտված եկամտաբերությունը հաշվարկվել է որպես կուտակային անվանական եկամտաբերության և կուտակային գնաճի տարբերություն: Որպես գնաճի ցուցանիշ հիմք է ընդունվել Հայաստանի Վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված սպառողական գների ինդեքսը


Կենսաթաշակային ակտիվների մեծությունը



2025 թվականի դեկտեմբերին Ցե-Կվադրատ Ամպեգայի կողմից կառավարվող կենսաթաշակային ֆոնդերի շուրջ 449 հազար մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը կազմել է 691 միլիարդ դրամ, որից շուրջ 496 միլիարդ դրամը կազմել են հատկացումները, իսկ 195 միլիարդ դրամը՝ կառավարման արդյունքում ձևավորված եկամուտը:

2025 թվականի տարեկան եկամտաբերությունը

2025 թվականի տարեկան եկամտաբերություն



2025 թվականը կենսաթաշակային երեք ֆոնդերին էլ ամփոփել են բարձր արդյունքներով: Ֆոնդերից Կայուն եկամտայինը ունեցել է 10.8%, Պահպանողականը՝ 12.8% եկամտաբերություն, իսկ Հավասարակշռված ֆոնդը իր 13.8% եկամտաբերությամբ 2025 թվականին գրանցել է պարտադիր կուտակային կենսաթաշակային համակարգում գործող բոլոր ֆոնդերից ամենաբարձր եկամտաբերությունը երրորդ տարին անընդմեջ:

Տարեկան եկամտաբերությանը նպաստող ամենամեծ գործոններից առաջինը ՀՀ պետական պարտատոմսերի բարձր եկամտաբերությունն է, որը ունեցել է շուրջ 6.1% - 6.5% դրական ազդեցություն, իսկ մյուսը արտասահմանյան բաժնային արժեթղթերը՝ 4.0% - 5.6% դրական ազդեցությամբ:

Կենսաթոշակային ֆոնդերի և հիմնական ակտիվների դասերի⁹ եկամտաբերություն

2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2024	2025
Term deposits AMD 14.4%	Government Bonds 20+ 35.5%	DM Equities 22.7%	Government Bonds 20+ 25.5%	DM Equities 26.9%	DM Equities 27%	DM Equities 12.6%	Term deposits AMD 10%	DM Equities 24.4%	Government Bonds 20+ 19.3%	DM Equities 21.6%
Government Bonds 20+ 13.7%	Government Bonds 5-10 32.5%	Government Bonds 5-10 21.7%	Term deposits AMD 12.5%	Government Bonds 20+ 17.4%	Government Bonds 20+ 19.3%	Term deposits AMD 9.9%	Government Bonds 0-5 6.2%	Government Bonds 20+ 23%	DM Equities 19.2%	Government Bonds 20+ 20.3%
Term deposits USD 9.8%	Government Bonds 0-5 22.5%	Government Bonds 20+ 20.9%	Government Bonds 5-10 10.3%	Government Bonds 5-10 16.5%	Term deposits USD 14.1%	Government Bonds 0-5 4.4%	Government Bonds 5-10 2.4%	Government Bonds 5-10 17.1%	Government Bonds 5-10 15.2%	Government Bonds 5-10 17.0%
Government Bonds 0-5 9.1%	CQFIX 15.9%	Government Bonds 0-5 15.2%	CQFIX 8.3%	CQBAL 14.3%	CQBAL 12.7%	Government Bonds 5-10 3.2%	Government Bonds 20+ -4.1%	CQBAL 16.5%	Government Bonds 0-5 12.9%	CQBAL 13.8%
CQFIX 7.9%	Term deposits AMD 15.3%	Term deposits AMD 14.6%	Government Bonds 0-5 7.7%	CQCON 13.8%	CQCON 11.8%	CQBAL 3.1%	CQFIX -4.5%	CQCON 16.3%	CQBAL 11.7%	Government Bonds 0-5 13.3%
Government Bonds 5-10 7.5%	CQCON 12.5%	CQBAL 14.2%	Term deposits USD 5.7%	CQFIX 10.7%	CQFIX 10.6%	CQCON 2.5%	CQCON -8.2%	Government Bonds 0-5 13.9%	CQCON 11.3%	CQCON 12.8%
CQCON 6.9%	CQBAL 12.2%	CQCON 14%	CQCON 4.9%	Term deposits AMD 10.6%	Term deposits AMD 10.1%	Government Bonds 20+ 0.7%	CQBAL -8.9%	CQFIX 12.6%	Term deposits AMD 9.2%	CQFIX 10.8%
CQBAL 5.2%	DM Equities 8.4%	CQFIX 11.9%	CQBAL 4.2%	Government Bonds 0-5 9.5%	Global IG Bonds 9.2%	CQFIX 0.4%	Term deposits USD -14.5%	Term deposits AMD 10.7%	CQFIX 9.0%	Term deposits AMD 9.6%
DM Equities 1.6%	Term deposits USD 7.5%	Global IG Bonds 7.4%	Global IG Bonds -1.2%	Global IG Bonds 6.8%	Government Bonds 0-5 5%	Term deposits USD -4%	Global IG Bonds -16.2%	Global IG Bonds 5.7%	Term deposits USD 3.7%	Global IG Bonds 8.2%
Global IG Bonds -3.2%	Global IG Bonds 2.1%	Term deposits USD 6.9%	DM Equities -7.9%	Term deposits USD 4.1%	Government Bonds 5-10 3.8%	Global IG Bonds -4.7%	DM Equities -32.4%	Term deposits USD 5.1%	Global IG Bonds -1.7%	Term deposits USD 4.0%

⁹ Աղբյուրը՝ Ընկերության կողմից ներքին օգտագործման նպատակով կառուցված ինդեքսներ և Bloomberg: Եկամտաբերության ցուցանիշները (total return) ներկայացված են ակտիվների նոմինալ արժույթով (currency of denomination): Աղյուսակում ներկայացված հասկացությունները ունեն հետևյալ նշանակությունը՝ Government Bonds – Պետական պարտատուներ, Term deposits – ժամկետային ավանդներ, Global IG Bonds - Գլոբալ պարտատուներ, DM Equities - Զարգացած երկրների բաժնետոմսեր:



Շուշաննա Աղաբեյյան, CFA

Ներդրումային Վերլուծաբան
Ցե-Կվադրատ Ամպեգա



Իգնատ Ֆրանգյան, CFA

Ռիսկերի Կառավարիչ
Ցե-Կվադրատ Ամպեգա

Ծանուցում

Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր ներդրում պարունակում է ռիսկեր, ֆոնդերի եկամտաբերության նախկին ցուցանիշները չեն կարող կանխորոշել ֆոնդերի հետագա եկամտաբերությունը:

Ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ ցուցանիշները ներառում են ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող վճարները և ծախսերը և ենթադրում են բոլոր եկամուտների վերաներդրում:

Այս փաստաթուղթը ծառայում է բացառապես տեղեկատվական նպատակի և չի ներկայացնում որևէ հրապարակային առաջարկ ֆոնդի փայեր գնելու կամ վաճառելու: Սույն փաստաթղթում տեղ գտած տեղեկատվությունը պետք չէ դիտարկել որպես ներդրումային խորհրդատվություն:

Ընկերությունը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: